

ՕՏԱՐ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Մասն Թ. – Ճապոններէն¹

ԱՐՄԷՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

armen_michaelian@yahoo.com

ՆԱԽԱԲԱՆ

Ներկայ յօդուածով շարունակում ենք օտար լեզուների տառադարձութեան կանոնները լուսաբանող յօդուածաշարքը², որի սոյն՝ իններորդ մասը, նուիրում ենք ճապոններէնի յատուկ անուններին:

Ինչպէս շարքի նախորդ յօդուածներում, այստեղ վերանայելու ենք գոյութիւն ունեցող իրավիճակը, փորձելու ենք գիտական հիմքերի վրայ դնել ճապոններէնի տառադարձութիւնը եւ քննութեան ենթարկել դրա մի շարք նրբութիւններ: Մեր այս մօտեցումը բնականաբար չի ենթադրում վերջնական լուծում: Այն միեւնոյն ժամանակ նպատակ ունի մասնագէտ հասարակութեան ուշադրութիւնը սեւեռել խնդրի վրայ:

Յօդուածները չձանրաբեռնելու եւ միեւնոյն բանը միքանի անգամ չկրկնելու համար՝ յօդուածների նախաբաններն ու ամփոփումները լինելու են հակիրճ: Այդուամենայնիւ, մեր ձեռնարկութեան տեսական գաղափարներին ծանօթանալու համար, ընթերցողին հրաւիրում ենք աչքի անցկացնել նախորդ (մասնաւորապէս՝ առաջին երեք) յօդուածների նախաբանները, տեսական մասերն ու ամփոփումները:

¹ Մեկնելով յօդուածին տրամաբանութենէն եւ ուղղագրական առաջարկներէն, յօդուածին ուղղագրութիւնը բացառաբար կը պահենք հեղինակային վիճակով:

² Տե՛ս՝ Արմէն Միքայէլեան, «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Ա. – մերձաւորաբեւեռան լեզուներ)», *Հայկազեան հայագիտական հանդէս*, Խ:2020, էջ 341-64. նաեւ նոյնի՝ «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Բ. – դասական լեզուներ, հին յունարէն եւ լատիներէն)», *Բազմավէպ*, ՃՀԸ:2020, էջ 304-36. նաեւ նոյնի՝ «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Գ. – ֆրանսերէն)», *Հայկազեան հայագիտական հանդէս*, ԽԱ:2021, էջ 443-66. նաեւ նոյնի՝ «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Դ. – անգլերէն)», *Հանդէս ամսօրեայ*, ՃԼԵ:2021, էջ 197-246. նաեւ նոյնի՝ «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Ե. – գերմաներէն)», *Բազմավէպ*, 1-2 (ՃՁ):2022, էջ 277-303. նաեւ նոյնի՝ «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Զ. – իտալերէն եւ սլաւներէն)», *Բազմավէպ*, 3-4(ՃՁ):2022, էջ 271-300. նաեւ նոյնի՝ «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Է. – ռուսերէն, համեմատութեամբ սլաւոնական այլ լեզուների)», *Հայկազեան հայագիտական հանդէս*, ԽԲ/2:2022, էջ 169-98. նաեւ նոյնի՝ «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Ը. – չինարէն)», *Բազմավէպ*, 1-2(ՃՁԱ):2023, էջ 272-305:

Երկար տարիներ Հայաստանում գործող *Տերմինաբանական կոմիտե* (Եզրաբանական լանժնաժողով) կամ *Լեզուի պեղական տեսչություն* անունը կրող զանազան մարմինները չեն անդադարձել ճապոներենի սկզբունքային խնդիրներին, այն է՝ գիտական հիմքերի վրայ դնել ճապոներենի տառադարձությունը, կարգավորել դրա կանոնները եւ մասնաւորապէս՝ ուսումնասիրել այդ լեզուի հնչյունաբանությունը՝ գիտական հայկաբան տառադարձություն մշակելու նպատակով³։ Ճապոնական անունների հարցում՝ ռուսերենի անսացողութեան տակ գտնուող սովետահայերէնը⁴ յարել էր ռուսերենի միջնորդութեամբ ժառանգութիւն ստացած սկզբունքներին, իսկ արեւմտահայերէնը Սփիւռքում յենուել է անգլերենի կամ ֆրանսերենի աւանդական տառադարձութիւնների վրայ։

Հայերս ու հայերէնը մինչ այսօր անմիջական քիչ յարաբերութիւններ ենք ունեցել ճապոներենի հետ։ Սակայն ճապոներէնը աշխարհի կարեւորագոյն լեզուներից է, եւ մենք համարում ենք, որ հայերենի տառադարձութեան տեսակէտից՝ այդ լեզուն մեր յօդուածաշարքի մէջ անպայման պէտք է իր տեղն ունենայ։ Ճիշտ է՝ ճապոներէն տառադարձութեան պատմական ու աշխարհագրական շրջանակները բաւական «սահմանափակ» են՝ ամփոփուած Ճապոնիա⁵ երկրի եւ նրա պատմութեան մէջ, սակայն դա չի նշանակում թէ ճապոներէն անունները մենք կարող ենք այլ լեզուների (օր.՝ անգլերենի կամ ռուսերենի) միջոցով տառադարձել։

ՃԱՊՈՆԵՐԷՆԻ ԳՐՈՒԹԵԱՆ ՈՒ ԳՐԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ (ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ) ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

Ճապոներենի գրութիւնը իրաւամբ համարում են աշխարհի ամենաբարդ գրութիւններից մէկը (նոյնիսկ աւելի բարդ քան չինարէնիւնը)։ Եթէ չինարէն բառերը գրում են հազարների հասնող ճենագրերով, ապա ճապոներէնը ոչ միայն գործածում է այդ նոյն ճենագրերը, այլեւ դրանց աւելացնում է երկու տեսակի վանկարան, իսկ վերջին տասնամեակներին

³ Տե՛ս՝ *Տերմինաբանական եւ ուղղագրական տեղեկագրու (1956-2006)*, Յ.Խ. Բարսեղեանի խմբ., «Զրդ հրաշալիք» հրատ., Երեւան 2006։

⁴ «Սովետահայերէն» ասելով նկատի ունենք արեւելահայերէնի՝ 1920-30ականներից Հայաստանում հաստատուած մի լեզուավիճակը, որը մինչեւ 1990ականներ ռուսերենի անմիջական, իսկ այժմ՝ աւանդական ազդեցութեան տակ է եղել եւ է։ Խօսքը ոչ միայն (եւ այնքան) ուղղագրութեան, որքան բառապաշարի ու շարահիւսակաւն օտարաբանութիւններով յագեցած եւ հայերէնի հարազատ տարրերին խորթ լեզուի մասին է (առաւելապէս տարածուած վարչական, հրապարակախօսական եւ իրաւաբանական խօսքի ու գրականութեան մէջ)։

⁵ Երկրի անուանման վերաբերեալ այստեղ որոշակի կարծիք չենք արտայայտում։ Ճապոնիա («իա» վերջաւորութեամբ) կամ Ճապոն (առանց այդ վերջաւորութեան). երկու ձեւերն էլ կարող են ընդունելի լինել։ Թէեւ արեւմտեան լեզուների մեծ մասը «իա» չունի՝ անգլ. եւ գերմ. Japan, ֆրանս. Japon, սպան. Japón, պորտուգալ. Japão, իտալ. Giappone, սակայն՝ յունարէն Ιαπωνία, ռուսերէն Япония։

նաեւ լատինական այբուբենը: Ասել է թէ՛ ճապոններէնի ուղղագրութեան մէջ իրար են միահիւստած երեք, նոյնիսկ չորս տեսակի գրելակարգ:

Գրութիւնը ճապոնիայում մուտք գործեց Չինաստանից եւ տարածուեց Ք.Յ. Դ.-Ե. դարերից սկսած: Սկզբնական շրջանում այն միմիայն չինարէն էր: Դարերի ընթացքում այդ նոյն ճենագրերով սկսեցին գրել նաեւ ճապոններէն, իսկ Ը.-Թ. դարերում ճենագրերից առաջացան նոր՝ պարզեցրած նշանագրեր, որոնք այդուհետեւ արտայայտում էին ոչ թէ բառը կամ արմատը ամբողջութեամբ (ինչպէս չինական գիրն է) այլ լեզուի հնչիւնները՝ անկախ նրանց նշանակութիւնից (հնչիւններն առանձին նշանակութիւն չեն էլ կարող ունենալ): Կազմաւորուեցին այսօր յայտնի *քանա* կոչուող երկու վանկարանները՝ *հիրագանան* եւ *քալականան*: Երկուսն էլ վանկարան են, այսինքն՝ ամէն նշանագիր արտայայտում է մի վանկ, որ ճապոններէն կարող է կազմուած լինել միայն կա՛մ մէկ մաքուր ծայնաւորից, կա՛մ մէկ բաղաձայնից ու ծայնաւորից: Միակ բաղաձայնը որ կարող է վանկ փակել, «ն/մ» բաղաձայնն է: Հիրագանան ու քատականան հարիւր տոկոսով նոյնը չեն: Թէեւ դրանք սկզբունքօրէն նոյն վանկարաններն են (ամէն մէկը նշանագրերի ի՛ր գծագրութեամբ), նրանց ուղղագրութիւնների մէջ կայ աննշան մի երկու տարբերութիւն:

Այսօր ճենագրերով (ճապոններէն՝ *քանջի*) գրում են բառերի իմաստալից մասերը, այսինքն՝ արմատները (թէ՛ չինական փոխառութիւններ, որ ճապոններէն բառապաշարի կէսից աւելին են, թէ՛ բնիկ ճապոններէն բառեր), որոնք կարող են լինել գոյական, բայ, ածական, կամ մակբայ: Հիրագանայով գրում են բառերի քերականական մասերը, ինչպէս նաեւ բնիկ ճապոններէն բազմաթիւ բառեր: Քատականայով գրում են բոյսերի ու կենդանիների բազմաթիւ անուններ, ճապոններէն բնածայն բառեր (ծիւծիւ, ճոճո-ալ, չխկչխկ-ալ...), նոր օտար բառերը (յատկապէս անգլերէնից փոխ առած), ինչպէս նաեւ շ(ե)ղագրի նպատակով (առանձին ուշադրութիւն հրափրելու համար):

Իւրաքանչիւր ճենագիր (քանջի գիր) ունի իր ուրոյն իմաստ(ներ)ը եւ դրանց արտասանութիւն(ներ)ը, որոնք կախուած են բառից ու խօսքաշարից: Ճապոնացի աշակերտները սովորում են երկու հազարից աւելի ճենագիր: Դրանց ընդհանուր թիւը տասնեակ հազարների է հասնում. առօրեայ գրի մէջ սակայն մօտ տասը հազարն է առաւել գործածական: Ճապոնական հրատարակութիւնները երբեմն հազուագիւտ ճենագրերի կողքին քանայով գրում են բառի արտասանութիւնը, ընդ որում հիրագանայով գրում են բնիկ ճապոններէն բառերի հնչումը, իսկ քատականայով՝ չինարէնինը (այն որը տուեալ գրուածքի մէջ պէտք է ընթերցել):

Վերջին տասնամեակներին տարածուել է նաեւ լատինագիր մի ճապոններէն, որն օգտագործում են զանազան բառեր գրի առնելու նպատակով. լատինագիր յապաւումներ (NATO, CIA, FBI, CD, DVD, km), համակարգիչներով ճապոններէն գիրը մուտք անելու համար (գրում են լատինագիր,

այնուհետև փոխարկում քանջի կամ քանա գրի), երբեմն օտարերկրացիների անուններ թողնում են լատինագիր են.:

Գրաշարուածքի մէջ քանջին ընդհանուր առմամբ մօտ 40 տոկոսն է, հիրագանան դրանից մի քիչ ւելի պակաս, քատականան շատ ւելի պակաս, իսկ լատինագիր հանդիպում են հատ ու կենտ բառեր:

Ճապոներէնը լատինական տառերով գրի առնելու փորձեր եղել են դեռևս եւրոպացիների հետ առաջին շփումների ժամանակ (ԺՁ. դարից): Այսօր գոյութիւն ունի լատինագիր երկու համակարգ, որոնք առաւել յայտնի են ճապոնագէտների շրջանում: Առաւել տարածուածը ամերիկացի բժիշկ, թարգմանիչ ու քարոզիչ Ջեմս Կուրտիս Հեփբուրնի (James Curtis Hepburn) 1867ին հրատարակած ճապոներէն-անգլերէն բառարանի գրադարձութիւնն է: Այն մի քանի անգամ ոչ էական փոփոխութիւնների ենթարկուեց եւ այսօր գործածութեան մէջ է դրա բարելաւուած տարբերակը:

Երկրորդ կարեւոր գրադարձութիւնը՝ *նիհոնշիկին* (日本式ローマ字, Nihon-siki (Nippon-siki) rōmazi [նիհոնշիկի (նիպպոնշիկի) ռոմաշի], «ճապոնակերպ» լատինագիր), առաջարկել է ճապոնացի բնագէտ Այիկիծու Թանակադատէն (Aikitsu Tanakadate) 1885ին, ի հակադրութիւն Հեփբուրնի համակարգի: Սրան 1937ին յաջորդեց Ճապոնիայի նախարարաց խորհրդի գրադարձութիւնը՝ *քունրեշիկին* (訓令式ローマ字, Kunrei-siki rōmazi, [քունրեշիկի ռոմաշի], «հրամանագիր» լատինագիր), որը նախորդի թեթեւակի ձեւափոխ տարբերակն էր: 1954ին Ճապոնիայի կառավարութիւնը վերահաստատեց քունրեշիկին իբրեւ պաշտօնական գրադարձութեան սկզբունք, սակայն մինչ այսօր էլ իրավիճակը բաւական խառն է Ճապոնիայում. որոշ հաստատութիւններ գործածում են պաշտօնական քունրեշիկին, ուրիշները՝ Հեփբուրնի փոփոխուած գրադարձութիւնը: Թէեւ Հեփբուրնինը շատ ւելի մեծ ճանաչում ունի աշխարհում, այն միահանգոյն չեն ընդունում ամէնուրեք: Երկրորդ աշխարհամարտից յետոյ ճապոնացի բոլոր դպրոցականները զուգահեռ սովորում են լատինագիր մի ուղղագրութիւն, որն այսօր ւելի յաճախ պաշտօնական քունրեշիկին է:

Մեզ՝ հայերիս, հետաքրքրական է նաեւ ռուսական սլաւոնագիր տառադարձութիւնը, որի անսացողութեան տակ է զարգացել սովետահայերէնը եւ որի գերակայութիւնը Հայաստանում զգացում է առ այսօր: Այն առաջադրել է ռուս լեզուաբան Եւգենի Պոլիանովը 1917ին եւ մինչեւ այժմ էլ ռուսերէն պաշտօնական գրադարձութիւնն է:

Յօդուածի վերջի Ա. յաւելուածում վանկ առ վանկ բերում ենք նշեալ չորս գրադարձութիւնները:

Ուշադրութիւն. Հեփբուրնի, ճապոնական պաշտօնական, ինչպէս նաեւ ռուսական գրութիւնները ւելի շուտ գրադարձութիւն են քան տառադարձութիւն. դրանց նպատակը ճապոներէն բառերի հնչումը լատիներէն կամ սլաւոներէն տառերով հաղորդելն է, նոյնիսկ եթէ գրութիւնը երբեմն խորթ է գալիս անգլերէն կամ ռուսերէն լեզուերին: Մեր յօդուածաշարքի նպա-

տակը այլ է. մեզ համար կարելի է առաելագոյնս հարազատօրէն հետեւել ճապոներէնի ուղղագրութեանը (այլ կերպ ասած՝ հայատառ ճապոներէն յօրինել), այլ հայ ընթերցողին օտար՝ ճափոներէն, անունները հայերէն տառերով լատագոյնս մատուցել:

ՀԱՅԵՐԷՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՀՆՁԻՆԱԿԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ

Ինչպէս ամէն յօդուածում նշում ենք, հայերէնի հնչիւնաբանութիւնն ու ուղղագրութիւնը ունեն սկզբունքներ, որոնք անհրաժեշտ է կիրարկել իւրաքանչիւր լեզուից կատարելիք տառադարձութեան ժամանակ: Յիշեցման կարգով՝ ստորեւ ամփոփ ներկայացնում ենք հայերէն տառադարձութեան՝ մեր առաջին երեք յօդուածներում արծարծած սկզբունքները: Յօդուածները չծանրաբեռնելու համար մանրամասները չենք կրկնում, եւ ընթերցողին հրաւիրում ենք, նախքան որեւէ լեզուի տառադարձութեանն անդադառնալը, անպայման ծանօթանալ այդ սկզբունքներին, առանց որոնց դժուար է ըմբռնել մեր տեսակէտները:

Ա. Պայթական («բ-պ-փ», «գ-կ-ք», «դ-տ-թ») եւ պայթաշփական («ջ-ճ-ջ», «ծ-ծ-ց») բաղաձայնների եռաստիճան կարգը հայկաբան տառադարձութեան ողնասիւններից մէկն է: **Բ.** Տառադարձութիւններում «է»ն գրում ենք միայն բառավերջին, կամ այլուր՝ ձայնաւորից առաջ: «Ե»ը հայերէնի [e] հնչոյթն է եւ այն գրում ենք մնացած դիրքերում՝ բառամիջում թէ բառասկզբին (բաղաձայններից առաջ): Բառասկզբի «ե»ը պարտադիր չէ [յէ] արտասանել. օտար անունների մեծ մասում այն գերադասելի է իր մաքուր հնչումով՝ [e] արտասանել: **Գ.** Օտար [o] հնչիւնը տառադարձութիւնների մէջ ամէնուր արտայայտում ենք մերոպեան «ո» տառով: Բառասկզբին, ինչպէս եւ «ե»ի պարագայում, պարտադիր չէ «ո»ն [վո] ընթերցել: Կիլիկեան ժամանակներից մուտք գործած կլոր «օ» տառը տառադարձութեան համար չէ: **Դ.** Բառամիջում եւ բառավերջին խուսափում ենք «ը» գրելուց: **Ե.** Օտար [v] (նաեւ [w]) հնչիւնը հայերէն արտայայտում ենք «վ, ւ, ու» տառերից մէկով, ըստ հայոց դասական ուղղագրութեան կանոնների: Բառասկզբում գրում ենք միմիայն «վ»: Ըստ հնարաւորութեան՝ օգտագործում ենք հայերէնի «աւ, եւ, իւ» երկբարբառները: Բառամիջում՝ բաղաձայնից յետոյ եւ ձայնաւորից առաջ, գերադասում ենք գրել (այնտեղ ուր դա թոյլ է տալիս ստուգաբանութիւնը) «ո»:
Զ. Օտար «ia (ja), ie (je), ii (ji), io (jo), iu (ju)» համակցութիւնները արտայայտում ենք բառասկզբին «յա, յե, յի, յո, յու» կապակցութիւններով, բառամիջում՝ «իա, իե, ի (կրկնակ «իի»ն պարզւում է), իո, իու» (եւ ոչ թէ մեր երկբարբառներով): Բառասկզբի «յ» տառի արտասանութիւնը անհրաժեշտաբար [ի] չէ: Աւանդական անուններում այն [ի] է հնչում, սակայն նոր տառադարձութիւնների մէջ այն պետք է իր ձայնով՝ [յ] արտասանենք: **Է.** Հայերէնի երկբարբառներն ու եռբարբառներն են. «այ, ոյ, աւ (օ), եւ, իւ, եա, ւո, եայ, եաւ (եօ), ւոյ»: Որեւէ տառադարձութեան ժամանակ կարելի է յարգել սրանց գրութեան կանոնները

եւ չյօրինել նոր կապակցութիւններ: Ը. Նոր լեզուների տառադարձութիւնների մէջ օտար [r] հնչիւնը ամէնուր գրում ենք «ր», բացառութեամբ բառակգրի, ուր գրում ենք «ռ»: «Ռ»ի գրութիւնը «ն»ից եւ «լ»ից առաջ պարտադիր չէ⁶:

Այսօր փաստօրէն ունենք տառադարձութեան երեք սկզբունք՝ մետրոպեան (կամ հայկաբան), կիլիկեան (կամ երբեմն՝ արեւմտահայ, սփիւռքահայ) եւ սովետահայ (կամ հայաստանեան) սկզբունքները: Մենք դէմ ենք ե՛ւ սովետահայ, ե՛ւ կիլիկեան տառադարձութիւններին: Նրանք մի կողմից՝ օտար լեզուների ազդեցութեան, միւս կողմից՝ մետրոպեան կանոնները զանց առնելու հետեւանք են: Աւելորդ չենք համարում կրկնել, որ օտար լեզուներին յարմարուելու փորձերը կերպարանափոխում են հայերէնը եւ ոտնակոխ անում մայրենին ամրապնդելու ու միասնական լեզու շինելու ջանքերը:

ՃԱՊՈՆԵՐԷՆԻ ՀՆՉՈՅԹՆԵՐՆ ՈՒ ՀՆՉԻԻՆՆԵՐԸ

Քանի որ Հեփբօրնի գրադարձութիւնը առաւել տարածուածն է աշխարհում եւ հենց դրանից են կատարում իրենց տառադարձութիւնները լրագրողներն ու քաղաքագէտները, դա լինելու է հայերէնի տառադարձութեան մեր հիմնաքարը, այսինքն՝ տառադարձութեան ելակէտ ենք ընդունելու Հեփբօրնի լատինատառ գրութիւնը, այն հնարաւորինս ճշտելով ճապոնագիր քանայով, կենդանի հնչողութեամբ ու ստուգաբանութեամբ (երբեմն էլ ռուսերէնի գրադարձութեամբ):

Այստեղ բերում ենք *Հնչիւնաբանութեան միջազգային ընկերութեան* (IPA⁷) այբուբենի նուազ ծանօթ նշանագրերից մի քանիսը (որ ստորեւ մեզ պէտք են գալու): Հնչոյթի կամ հնչիւնի⁸ նշանը ընդունուած է դնել անկիւնաւոր փակագծերի մէջ՝ [ա], [բ], [գ], իսկ տառ արտայայտելու համար նշանագիրը դնում ենք չակերտների մէջ՝ «ա», «բ», «գ» եւն.:

IPA [ա]ն հնչում է մօտաւորապէս ինչպէս հայերէնի [ը] հնչիւնը: IPA [թ] հնչումը համապատասխանում է հայերէն [շի] հնչմանը շատ փափուկ [շ]ով, որը համարեա թէ [ս] է լսում: IPA [թ]ն նման է հայերէնի փափուկ

⁶ Հիմնարար այս սկզբունքների մասին անելի մանրամասն տե՛ս՝ մեր առաջին երեք յօդուածների համանուն բաժիններում (*Հայերէն քառադարձութեան հնչիւնա(բան)ական սկզբունքները*):

⁷ International Phonetic Association, *Հնչիւնաբանութեան միջազգային ընկերութիւն*, որի հնչական նշանագրերով է ընդունուած գրի առնել զանազան լեզուների հնչոյթները: Միջազգայնօրէն ընդունուած է կա՛մ ֆրանսերէն (API), կա՛մ անգլերէն (IPA) յապատումը:

⁸ «Հնչոյթ» եւ «հնչիւն» եզրոյթների տարբերութիւնը քաջ յայտնի է լեզուաբանութեանը: Տե՛ս՝ Յ. Զ. Պետրոսեան, Ս. Ա. Գալստեան, Թ. Ա. Ղարազիւլեան, *Լեզուաբանական բառարան*, Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի հրատ., Երեւան, 1975:

[չի] կամ [ծի] հնչմանը: IPA [ɕ] ին հայերեն [ի]ի եւ [ֆ]ի միջեւ շրթնաշրթնային մի հնչյուն է, նման լուցկի փչելու ձայնին: IPA [ɲ] ին նոյն հնչյունն է ինչ եւ հայերէնի ոնգային «ն»ն «անգամ» բառի մէջ:

Եթէ հաշուենք միայն աւանդական հնչոյթները (ըստ ճապոնական քանա վանկարանի եւ ըստ պաշտօնական լատինադարձութեան), ճապոներէն ունի 10 ձայնաւոր (5 կարճ եւ 5 երկայն), 2 կիսաձայն եւ 12 բաղաձայն, ընդամենը 24 հնչոյթ⁹: Եթէ հաշուի առնենք իսկապէս գոյութիւն ունեցող հնչիւնները, ապա պէտք է հաշուենք 17 բաղաձայն. վերի 12ին աւելացնելով «sh», «ch», «ts», «f», «j» տառ-հնչիւնները (ըստ Հեփբուրնի գրադարձութեան):

Հայերէնն ունի 36 պարզ հնչոյթ՝ 6 ձայնաւոր, 1 կիսաձայն, 29 բաղաձայն: Ստորեւ անդրադառնում ենք ճապոներէն տառադարձութեան գլխաւոր կանոններին ու նրբութիւններին:

Ճապոներէնին եւ մանաւանդ հնչիւնաբանութեանը աւելի մօտից ծանօթանալու համար, ընթերցողին ներկայացնում ենք միքանի աշխատութիւն¹⁰:

ՃԱՊՈՆԵՐԷՆԻՅՑ ՏԱՌԱԴԱՐՁԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ ԵՒ ՆՐԲՈՒԹԻՒՆՆԵՐ

ա) ճապոներէնի կարճ ձայնաւորները

Ճապոներէնն ունի հինգ կարճ ձայնաւոր՝ «a», «e», «i», «o» եւ «u», որոնցից առաջին չորսը համապատասխանում են հայերէնի «ա», «ե», «ի» եւ «ո» տառերին ու հնչիւններին: Սրանց տառադարձութիւնը դժուարութիւն չի ներկայացնում:

Ինչ վերաբերում է վերջին՝ «u» տառին, ապա դրա արտասանութիւնը միջին դիրք է գրաւում հայերէն [ու]ի եւ [ը]ի միջեւ: Ճապոներէն «ու»ն արտասանում է առանց շրթունքները կլորացնելու: Եթէ լինէր արտասանական միայն այս առանձնայատկութիւնը, մենք «u» տառը աներկբայօրէն

⁹ Այստեղ բնականաբար հաշուի չենք առնում օտար լեզուները տառադարձելու համար վերջին տասնամեակներին աւելացրած «հնչիւնները» (որ առկայ են միայն քատականա վանկարանում):

¹⁰ Laurence Labrune, *La Phonologie du japonais (version électronique)*, Peeters, Leuven–Paris 2006. նաեւ՝ Seichi Makino and Michio Tsutsui, *A Dictionary of Basic Japanese Grammar*, The Japan Times, Tokyo 1994. նաեւ՝ Kunio Kuwae, *Manuel de japonais, vol. 1*, 13^e éd., L'Asiathèque, Paris, 2010. նաեւ՝ Hugh Clarke and Motoko Hanamura, *Colloquial Japanese*, 2nd ed., Routledge, London & New York 2005. նաեւ՝ Yasuko Kosaka Mitamura, *Let's Learn Hiragana, First Book of Basic Japanese Writing*, Kodansha International, Tokyo and New York 1988. նաեւ՝ Yasuko Kosaka Mitamura, *Let's Learn Katakana, Second Book of Basic Japanese Writing*, Kodansha International, Tokyo and New York 1989. նաեւ՝ Б.П. Лаврентьев, *Самоучитель японского языка*, Изд. Наука, Москва 1982 [B.P. Lavrentyev, *Teach Yourself Japanese*, Nauka Publ. House, Moscow 1982].

կը տառադարձէինք «ո», քանի որ, ինչպէս արդէն դրա մասին բազմիցս խօսել ենք, «ը» գրելը յարմար չէ բառամիջում: Սակայն այս «ս» տառը ունի մի առանձնայատկութիւն (դրա մասին կը խօսենք աւելի ուշ), ինչ եւ հայերէնի «գաղտնավանկ» [ը] հնչիւնը, այն է՝ օտար անունների մէջ լրացնել ծայնաւորների պակասը եւ այդպիսով ներդաշնակութիւն ապահովել վանկերի հերթագայութեան մէջ:

Այդուամենայնիւ, որքան էլ այս վերջին կէտը գայթակղիչ լինի (այն է՝ հայերէն գրել «ը», կամ չգրել ու արտասանել [ը]), մեր միակ լուծումը «ո»ով տառադարձումն է, մանաւանդ որ ո՛չ քանա վանկարաններում, ո՛չ էլ լատինագիր կամ սլաւոնագիր գրադարձութիւններում այդ երեւոյթը գրով չի արտայայտուի, ուստի տառադարձողը պէտք է այնքան լաւ ծանօթ լինի ճապոններէն անուններին եւ բուն լեզուին, որ կարողանայ որոշել թէ ո՞ր դիրքում կարող է այդ «ո»ն վերածել գաղտնավանկ «ը»ի: Մեր կարծիքով դա անյաղթահարելի դժուարութիւն է եւ իմաստ չունի այդ աստիճանի նրբութիւնը արտայայտել հայերէն տառադարձութեան մէջ:

Օրինակներ. **Abashiri** Աբաշիրի, **Amagasaki** Ամագասակի, **Ebina** Եբինա, **Edogawa** Եդոգաւա, **Akune** Ակունէ, **Higashine** Հիգաշինէ, **Ibaraki** Իբարակի, **Inamura** Ինամուրա, **Okinawa** Ոկինաւա, **Obama** Ոբամա, **Uruma** Ուրումա, **Utada Hikaru** Ուտադա Հիկարու, **Ueda** Ուեդա, **Kurume** Բուրումէ, **Tsurumi** Յուրումի:

բ) «ս» եւ «i» ծայնաւորների խլացումը

Ճապոններէնի «ս» եւ «i» ծայնաւորները, խուլ բաղաձայնների որոշակի շրջապատում, կարող են խիստ թուլանալ: Այն աստիճան որ ականջի համար դրանք գրեթէ անլսելի են դառնում¹¹. օր.՝ **gakusha** «գիտուն» (կենդանի արտասանութիւնը՝ [գակ(ը)շա]), **tsuki** «լուսին» (կենդանի արտասանութիւնը՝ [g(ը)կի]), **sukoshi** «սակա» (կենդանի արտասանութիւնը՝ [ս(ը)-կոշի]), **futa** «կափարիչ» (կենդանի արտասանութիւնը՝ [ֆ(ը)տա]), **shikashi** «սակայն» (կենդանի արտասանութիւնը՝ [շ(ը)կաշի]), **sakura** «(ճապոնական) բալենի» (կենդանի արտասանութիւնը՝ [սակ(ը)րա]), **musuko** «որդի» (կենդանի արտասանութիւնը՝ [մըս(ը)կո]): Հարց է՝ հաշուի առնել՝ այդ թուլացումը եւ այդ դիրքերում ոչ մի ծայնաւոր չգրել (տեղը համարել գաղտնավանկ «ը»), թէ՞ անտեսել այդ երեւոյթը: Տառադարձութիւնը պարզեցնելու նպատակով՝ մենք գտնում ենք, որ այդ թուլացումն արտայայտելը անիմաստ ճոխութիւն կը լինի, մանաւանդ որ գրութիւնը ոչ մի կերպ այն չի արտայայտում եւ տառադարձողը չի կարող գուշակել երեւոյթը:

Օրինակներ. **Asakuchi** Ասակուճի, **Hakusan** Հակուսան, **Kakuda** Բակուդա, **Hasuda** Հասուդա, **Ibusuki** Իբուսուկի, **Hiratsuka** Հիրաճուկա, **Shikotsu** Շիկոճու:

գ) երկայն ծայնաւորներ

¹¹ Labrune, *La Phonologie du japonais*, էջ 46 եւ յաջորդները:

Ճապոներենի իւրաքանչիւր ծայնաւոր կարող է լինել նաեւ երկայն, այսինքն արտասանուել կրկնակի ամանակով: Ծապոներենի համար դա իմաստորոշ դեր ունի: Հայերենի տառադարձութիւնը սակայն չի հետեւում օտար լեզուների այդ երեւոյթին (որ մենք հանդիպել ենք ինչ յունարէնում, անգլերէնում եւ այլուր): Ուստի՝ ճապոներենի տասը ծայնաւորները մենք վերածում ենք ինչ պարզ ծայնաւորի:

Ծապոներենի հիրագանա գրութիւնը երկայնութիւնը արտայայտում է երկու տարբեր գործիքներով. «aa», «ii» եւ «uu» երկայնների համար գրում են մի երկրորդ տառ (նոյն տառից): Իսկ «ee»-ի եւ «oo»-ի համար երբեմն «ei» եւ «ou», երբեմն՝ նոյն տառը կրկնակի (կախուած է բառի ստուգաբանութիւնից): Մեզ պետք է չշփոթեցնեն «ei» եւ «ou» գրութիւնները («կեղծ» կոչուող երկբարբառներ). դրանք ոչ թէ [ej] եւ [ou] երկբարբառներ են, այլ պարզապէս երկայն ծայնաւորներ: Այլ հարց է թէ օրինակ «ei» երկայնը ստուգաբանօրէն եղել է երկբարբառ (եւ այժմ էլ ճապոնացիների մի մասը կարող է դա իբրեւ երկբարբառ արտասանել): Բայց քանի որ մետրոպէան հայերէնը չունի [ej] երկբարբառ, մեր միակ տառադարձութիւնը «ե»ն է:

Լատինագիր գրադարձութիւնները կա՛մ կրկնում են ծայնաւորը, կա՛մ հետեւում են քանայի գրութեանը, կա՛մ ծայնաւորի վրայ երկայնի նշան դնում («oo, ou, õ, ô» – տե՛ս՝ Յաւելուած Բ.): Քատականայի վանկարանը երկայնացումը արտայայտում է միակերպ, ծայնաւորից յետոյ դնում է երկայնի նշան («—») (եթէ իհարկէ երկու ծայնաւորները ստուգաբանօրէն զատ միաւորներ չեն):

Միջազգային տառադարձութիւնների մէջ երկայնութիւնը սովորաբար չեն արտայայտում:

Օրինակներ. Tōkyō Թոկիո, Kyōto Քիոտո, Ōsaka Օսակա, Anjō Անջո, Honshū Հոնշու, Kyūshū Քիուշու, Kitaakita Քիտակիտա, Masaaki Sakai Մասակի Սակայի, Iizuka Իձուկա, Niigata Նիգատա, Meiji Մեյջի, Chikusei Չիկուսէ, Neishi Նեշի, Keisuke Honda Քեսուկէ Հոնդա:

դ) երկբարբառներ

Քերականութիւնների մեծ մասը ճապոներէնում երկբարբառներ իբրեւ այդպիսիք չի արձանագրում, դրանք համարում է մէկը միւսին յաջորդող երկու ծայնաւոր՝ ամէն մէկը մէկական ամանակով: Կարող ենք միայն հարցը դնել «ai» կապակցութեան համար, որը կարող է ե՛ւ «այի»-ի, ե՛ւ «այ»-ի տեղ անցնել¹²: Արեւելահայ աւանդական տառադարձութեան մէջ (ռուսերէնի ազդեցութեամբ) խորհրդային շրջանից ունենք օրինակ՝ Հոկկայդո: Այդպիսի տառադարձութիւնը կարելի է պահել, առանց անշուշտ հրաժարուելու, այնտեղ որտեղ դա աւելի դիւրին է հնչում, «այի» գրութիւնից:

¹² Յիշեցնենք, որ եթէ «ai»-ն տառադարձում ենք «աի», հայերէնում երկուսի միջեւ անհրաժեշտաբար «յ» ենք գրելու՝ «այի»:

Միւս ծայնաւորների հետ առաջարկում ենք գրել «ի»՝ «oi» «ոյի», «ui» «ուի»:

Օրինակներ. Itoigawa Իտոյիգաւա, Koike Eiko Քոյիկէ Եկո, Hakui Հակուի, Suita Սուիտա:

«Ա-ո» եւ «ո-ա» յօրանջի դէպքում հայերէնը աւանդաբար ներդրում է «ւ/վ» կամ «հ»: Ճապոներէնի համար մենք գերադասում ենք «հ»ն, իբրեւ աւելի «աննկատ» հնչիւն. Aomori Ահոմորի, Nagaoka Նագաահոկա, Toyooka Թոյոհակէ, Oamishirasato Օհամիշիրասատո:

ե) բաղաձայնների շնչեղութեան հարցը

Ճապոներէնի խոլ բաղաձայնների շնչեղութեան հարցը արժանի է յատուկ ուշադրութեան: Քերականութիւններն ու դասագրքերը յստակ չեն. անգլերէնով գրուած դասագրքերը ասում են թէ «k-t-p» բաղաձայնները հնչում են ինչպէս անգլերէնի համապատասխան բաղաձայնները, իսկ ֆրանսերէնով գրուած դասագրքերը՝ իբր թէ դրանք նոյնն են ինչ եւ ֆրանսերէնի համապատասխան հնչիւնները: Արդ, մենք՝ հայերս խիստ զգայուն ենք շնչեղութեան նկատմամբ. մեզ համար «կ-տ-պ» շարքը նոյնը չէ ինչ «ք-թ-փ»ն: Այլ քերականներ նշում են որ դրանք աւելի «շնչեղ» են քան ասենք սպաներէնի համապատասխան բաղաձայնները, եւ նուազ շնչեղ քան անգլերէնին: Նոյնիսկ հնչիւնաբանութեանը նուիրուած յատուկ աշխատութիւնները յստակօրէն ոչինչ չեն ասում¹³:

Մեր առաջին տպաւորութիւնն այն էր թէ ճապոներէնի այդ բաղաձայնները շնչեղ են՝ «ք-թ-փ»: Երբ լսում ենք ճապոնացիների «խնամքով արտասանած» վանկերը (ka-ki-ku-ke-ko, ta-chi-tsu-te-to, pa-pi-pu-pe-po), յստակօրէն լսում ենք շնչեղ բաղաձայններ (քա..., թա..., փա...): Սակայն լեզուին աւելի սերտ ծանօթութիւնը ճշգրտեց մեր այդ առաջին տպաւորութիւնը: Սովորական խօսքաշարի մէջ ճապոնացին շնչեղ է արտասանում միայն բառի *առաջին* բաղաձայնը, իսկ մնացածները թողնում է խոլ: Բնիկ զանազան մարդկանց լսելուց յետոյ այս համոզմունքն աւելի ամրացաւ մեր մէջ: Երբ ճապոնացին բառը արտասանում է վանկ առ վանկ, ամէն վանկ դառնում է «բառի» սկիզբ, ուստի նա դրանք շնչեղ է արտաբերում: Բայց այդ նոյն վանկերը սովորական խօսքի մէջ նորից վերածւում են խոլ բաղաձայնների: Ճապոնիայի մայրաքաղաք Թոկյօ անունը հնչում է [թոոկյոո], իսկ նոյն վանկերից կազմուած (ծայնաւորների երկայնութիւնը մի կողմ թողած) Kyōto քաղաքի անունը՝ [քյոոտո]: Ասել է թէ՛ միեւնոյն բաղաձայնը պարունակող վանկով ճապոնական գիրը երկու զանազան հնչիւն է արտայայտում, որոնք սակայն միեւնոյն հնչոյթն են ճապոներէնի համար (բայց ոչ հայերէնի): Այս կաղապարը գուցէ բացարձակ չէ (յատուկ վիճակագրութիւն չենք անցկացրել), սակայն գերակշռող է:

¹³ Օրինակ՝ Լորանս Լաբրինի վերը նշուած աշխատութիւնը (Labrune, *La Phonologie du japonais*):

Երկար մտածելուց յետոյ որոշեցինք հենց այդ մօտեցումն էլ առաջարկել տառադարձութեան համար. բառասկզբին գրել հայերէնի շնչեղ բաղաձայնները՝ «թ-թ-փ», իսկ բառամիջում՝ խուլերը՝ «կ-տ-պ»: Այսպիսի լուծումը ոչ միայն առաւելագոյնս մօտենում է ճապոներէնի կենդանի արտասանութեանը, այլեւ նպաստում է արեւմտահայերէն ու արեւելահայերէն այսօր գոյութիւն ունեցող տառադարձութիւնների մերձեցմանը՝ երկուստեք զիջումներով: Այսօր արեւելահայերէնը (ռուսերէնի ազդեցութեամբ անշուշտ) գրում է Տոկիո, արեւմտահայերէնը՝ Թոքիո: Մեր առաջարկած ձեւը կ'ունենայ Թոկիո տեսքը¹⁴:

Անփորձ տառադարձողի համար դժուարութիւնն աննշան է:

Վերոնշեալից բխում է, որ «ch» եւ «ts» բաղաձայնները (որ «t»ի դիրքային այլահնչիւններն են համապատասխանաբար «i» եւ «u» տառերից առաջ) բառասկզբին գրելու ենք համապատասխանաբար «չ» եւ «ց» (իմա՝ շնչեղ), իսկ բառամիջին՝ «ճ» եւ «ծ» (խուլ):

Մնացած բաղաձայնները դժուարութիւն չեն ներկայացնում:

Օրինակներ զանազան բաղաձայնների՝ K – **Kadoma** **Ք**ադոմա, **Kawasaki** **Ք**աւասակի, **Sakuragawa** Սակուրագաւա, **Ibaraki** Իբարակի, **ikebana** իկեբանա, **karate** քարատէ, T – **Toyota** **Թ**ոյոտա, **Tanaka** **Թ**անակա, **Tanemaki** **Թ**անեմակի, **Atami** Ատամի, **Kitamoto** **Ք**իտամոտո, P – **Petegari** **Փ**ետեգարի, **Piratokomi** **Փ**իրատոկոմի, **Apoi** Ապոյի, **Pirika** Նւպուրի **Փ**իրիկա Նուպուրի, G – **Gobo** **Գ**ոբո, **Gosen** **Գ**ոսեն, **Kasuga** **Ք**ասուգա, **Megumi** Մեգումի, D – **Dodo** **Դ**ոդո, **Domoto** **Դ**ոմոտո, **Hamada** Համադա, B – **Bessan** **Բ**եսան, **Biwa** **Բ**իւա, **Abukuma** Աբուկումա, **Kobayashi** **Ք**ոբայաշի, M – **Murakami** Մուրակամի, **Minamata** Մինամատա, N – **Ninoto** Նինոտո, **Numanohara** Նումանոհարա, R – **Rebun** Ռեբուն, **Rutori** Ռուտորի, **Akabira** Ակաբիրա, **Gamagori** Գամագորի, H – **Hamasaki** Համասակի, **Himi** Հիմի, **Asahi** Ասահի, **Mihara** Միհարա, **Sahoro** Սահորո, Y – **Yuri** **Յ**ուրի, **Yoko** **Յ**ոկո, **Yabu** **Յ**աբու, **Yamagata** **Յ**ամագատա, **Ayaka** Այակա, **Kanoya** **Ք**անոյա, W – **Wada** Վադա, **Warabi** Վարաբի, **Edogawa** Եդոգաւա, **Ginowan** Գինովան, **Iwakuni** Իւակունի, **Warusawa** Վարուսաւա, CH – **Chiba** **Չ**իբա, **Chikuma** **Չ**իկումա, **Chikamatsu** **Չ**իկամածու, **Hitachi** Հիտաճի, **Kawaguchi** **Ք**աւագուճի, **Chichibu** **Չ**իճիբու, **Tsuchida** Յուճիդա, **Yamaguchi** **Յ**ամագուճի, TS – **Tsushima** **Յ**ուշիմա, **Tsuchiura** **Յ**ուճիուրա, **Karatsu** **Ք**արածու, **Nihonmatsu** Նիհոնմածու, **Matsushita** Մածուշիտա, **Mitsubishi** Միճուբիշի:

զ) «H» եւ «F» բաղաձայնների հարցը

¹⁴ Նոյն տրամաբանութեամբ առաջնորդուելով՝ «Ճապոն/Ճաբոն/Ճափոն» զուգահեռ ձեւերից ընտրեցինք «Ճապոն»ը, պահպանելով բառամիջի պարզ խուլ բաղաձայնը: Իդէպ՝ «Ճաբոն» արեւմտահայերէն ձեւը նոյնպէս դրա կողմնակիցն է, քանզի «բ» գրելով արեւմտահայերէնը ի սկզբանէ արտայայտում էր պարզ խուլ [պ] (IPA [p]) բաղաձայնը:

Ճապոներեն վանկարանի «H» տառի շարքում Հեփբուրնի գրադարձությունը «U» տառի համակցությամբ գրում է «F» («ha-hi-fu-he-ho»): Այսինքն՝ ճապոներենում «H» տառը «U»-ից առաջ ձեռք է բերել [f]-ին մօտ մի հնչյուն (IPA [ɸ]): Սակայն դա մեզ ծանօթ շրթնատամնային [ɸ]-ն չէ: Ծապոնացիները հնչյունն արտասանում են միայն շրթունքներով, կարծես լուցկի են փչում: Ակնյայտ է որ սա [h]-ի մի ենթահնչյուն է: Իդեպ՝ պաշտօնական լատինագիր գրադարձությունը զանց է առնում հնչման այդ նրբությունը եւ պահպանում է հնչոյթը՝ «ha-hi-**h**u-he-ho»: Մենք նոյնպես առաջարկում ենք ամէնուր գրել միայն «h» եւ բոլորովին չգրել «f»:

«H»-ի շարքը պատմականօրէն եղել է «P», եւ այսօր էլ դեռեւս զգալի են դրա մնացուկները, օրինակ՝ խօսակցական *Nihon Ճապոնիա* անունը ակելի բարձր ոճում հնչում է *Nippon*: Դա է նաեւ պատճառը, որ քանա գրութեան մէջ, «H» շարքը *ձայնեղացման կէտեր* ստանալով վերածում է «B» շարքի¹⁵:

Օրինակներ՝ Fukuoka **Հ**ուկուկա, Furano **Հ**ուրանո, Fushimi **Հ**ուշիմի, Gifu **Գ**իհու, Kofu **Ք**ոհու, Takafumi **Թ**ակա**հ**ումի:

է) «Z» բաղաձայնի «ձ / զ» երկընտրանքը

Ծապոներենի «sa-shi-su-se-so» շարքին համապատասխանում է ձայնեղ «za-ji-zu-ze-zo» շարքը: Հեփբուրնի եւ պաշտօնական լատինագրությունները «s»-ի դիմաց դրել են «z»: Կենդանի արտասանությունը սակայն միանշանակ [q] չէ. այն կարող է լինել [q], բայց ակելի յաճախ [ð] է: Քերականությունները բոլորն էլ գիտակցում են արտասանութեան այս երկուությունը: Թոկիոյի Ginza թաղամասի անունն օրինակ հնչում է [qինձա]: Ռուսերենը տառադարձում է «дз»: Թէեւ երկու տառադարձություններն էլ («ձ» եւ «զ») ճիշտ կը լինէին, մենք որոշեցինք գրել «ձ», ճապոնական անուններին գուցէ եւ արեւելեան ինչ-որ համ տալու միտումով:

Օրինակներ. Zama **Ձ**ամա, Zushi **Ձ**ուշի, Zentsuji **Ձ**ենձուջի, Inazawa **Ի**-նաձաւա, Kanzaki **Ք**անձակի, Bizan **Բ**իձան, Suzuki **Ս**ուձուկի, Kisarazu **Ք**իսարաձու, Unzen **Ո**ւնձեն, Yamizo **Յ**ամիձո, banzai բանձայ:

ը) «shi» եւ «ji» վանկերի տառադարձումը

Ռուսերենի անսացողութեան տակ գտնուող արեւելահայերէնը «shi» (IPA [ɕi]) եւ «ji» (IPA [dʑi]) վանկերը տառադարձել է «սի» եւ «ձի» (Հիրոսիմա, Ֆուձիյամա): Ռուս քերականներն իրենք էլ են գիտակցում դրա անճշտությունը, եւ ռուսերէնը այդպէս է գրում խուսափելու «ши, жи» գրելուց եւ այդ վանկերը կոշտ կարդալուց (քանի որ ռուսերէնում դրանք միշտ կոշտ են)¹⁶: Մենք կողմ ենք այդ վանկերը տառադարձելու ըստ Հեփբուրնի լատինագիր գրադարձութեան, որը եւ ամենամօտն է ճապոներենի կեն-

¹⁵ Այստեղ չենք խորանայ ձայնեղացման կէտերի դերի եւ դրանց նրբությունների մէջ:

¹⁶ Лаврентьев, էջ 21:

դանի արտասանութեանը¹⁷: Արեւմտահայերէնը միշտ այդպէս է տառադարձել (անգլերէնից):

Օրինակներ. **Toshiba** Թոշիբա, **Hiroshima** Հիրոշիմա, **sushi** սուշի, **Shikoku** Շիկոկու, **Fukushima** Հուկուշիմա, **Higashimatsushima** Հիգաշիմա-ժուշիմա:

Ճապոնիայի սրբազան լեռան անունը ճապոնագիր գրում է 富士山, հի-րազանայով 富士, Հեփրուրնը՝ Fujisan, պաշտօնական լատինագիրը՝ Huzisan: Ռուսերէնը գրում է Фудзияма, որից էլ սովետահայերէն Ֆուձի-յամա: Անգլերէնն ասում է Mount Fuji, ֆրանսերէնը՝ Mont Fuji: Նախ՝ սխալ է «յամա» բառի առկայութիւնը տառադարձութեան մէջ (որ ճապոներէն նշանակում է «սար»): Ճապոներէնը ասում է Fuji-**san** («san» բառը չի-նարէնից է. նոյնպէս նշանակում է «լեռ»): Մենք առաջարկում ենք տառադարձել միայն «Fuji/Huzi» անունը՝ Հուջի, իսկ «san»-ը թարգմանել «լեռ», ինչպէս անում է մնացած լեզուների մեծ մասը: Ուրեմն հայերէն կը լինի՝ Հուջի լեռ:

Այստեղ ընդգծենք, որ «ji» վանկը ունի [ջի] արտասանութիւն, եւ այն պէտք չէ շփոթել նախորդ կէտի «z» բաղաձայնի [ձ] արտասանութեան հետ (որ շփոթում է ռուսերէնը):

Օրինակներ. **Dogojima** Դոգոջիմա, **Kuji** Քուջի, **Shinji** Շինջի, **Zentsuji** Չենժուջի:

թ) «ն / մ» երկընտրանքը

Ճապոներէնի «N/M» տառը (հիւրագանա «ん», քատականա «ン»). միակ հնչիւնն է որ կարող է վանկ փակել) ունի միքանի այլահնչիւն արտասանութիւն: «M-B-P» շրթնայիններից առաջ հնչում է [մ], «K-G» քմայիններից առաջ IPA [ŋ], այլուր եւս՝ զանազան նրբութիւններով (հմմտ. հայերէնում՝ անամօթ, անտարբեր, անպայման, անկատար, անվաւեր, անսասան):

Մի կողմից՝ հնարաւոր է ճապոներէն «N/M» տառը ամէնուրեք տառադարձել «ն» (հայերէն տառերով գրուած բառն այնուհետեւ արտասանելով ըստ հայերէնի օրէնքների), միւս կողմից՝ գայթակղելի է «մ-բ-պ»ից առաջ գրել «մ» (ինչպէս դա անում են երբեմն Հեփրուրնի եւ ռուսերէն գրադարձութիւնները): Մենք գերադասում ենք այս վերջինը: Վերջնական որոշումը թողնում ենք ճապոնագէտներին եւ նախ եւ առաջ հայ լեզուաբաններին:

Օրինակներ՝ **shinbun/shimbun** շիմբուն, **Asahishinbun** Ասահիշիմբուն, **kanpai/kampai** քամպայ, **tenpura** թեմպուրա, **Gunma** Գումմա, **Kanmuri** Բամմուրի/Քանմուրի, **Monbetsu** Մոմբեծու, **Kinpu** Քիմպու:

ժ) բառամիջի ռնգային «գ»ի տառադարձումը իբրեւ «զ»

¹⁷ Վերջին տարիներին ռուսերէնն ինքն է հետեւում Հեփրուրնին. *cyam/սուշի, Тошида/Թոշիբա...*:

Ճապոներեն կենդանի արտասանությունը, յատկապես անելի խնամուած ու բարձր ոճը, բառամիջի շատ «G»-եր հնչեցնում է ռնգային տեսքով (IPA [ŋ], ինչպես հայերեն «անգամ» բառի միջի «ն»-ն) կամ էլ շատ թույլ [ŋ]ին նմանող արտաբերմամբ: Չենք կարծում սակայն որ այդ հնչումները իրենց տեղը պետք է ունենան մեր տառադարձության մէջ (հայատառ գրութեամբ ոչ էլ կարող են ունենալ): «G» տառը միասնական հնչոյթ է եւ այն այդպէս էլ պէտք է միշտ գրել: Այս ակնյայտ փաստը անելի շուտ ասում ենք կենդանի արտասանութեամբ գայթակղուողներին՝ անելորդ բարդութիւններ չներմուծելու համար:

Օրինակներ՝ Nagasaki Նագասակի, Koga Բոգա, Kagoshima Քագոշիմա, Kaga Քագա, Nagano Նագանո, Nagoya Նագոյա:

Ժա) քմայնացած շարքերը

Ճապոներեն բաղաձայնների քմայնացած շարքերի մէջ հայերեն տառադարձութիւնն ընդհանրապէս արտայայտում ենք «ի» ձայնաւորի յաւելումով. «կիա, կիու, կիո, գիա, գիու, գիո» են:

Այդուամենայնիւ, «S» եւ «T» բաղաձայնների համապատասխան շարքերը (ե՛ւ խուլ, ե՛ւ ձայնեղ) տառադարձում ենք առանց «ի» տառի յաւելումի, ինչպէս եւ դրանք գրում են Հեփբուրնի գրադարձութեամբ. «sha, shu, sho» «շա, շու, շո» (եւ ոչ թէ «շիա, շիու, շիո»), «cha, chu, cho» «չա (ճա), չու (ճու), չո (ճո)», «ja, ju, jo» «ջա, ջու, ջո»: Իմաստ չունի բարդացնել հայատառ գրութիւնը, մանաւանդ որ Հեփբուրնի լատինագիրն արդէն այդպէս է: Պաշտօնական արդի լատինագիրը գրում է «sya, syu, syo, tya, tyu, tyo, zya, zyu, zyo» (հմտ. Յաւելում Ա.):

Քանի որ քմայնացած շարքերը շատ յաճախ չինական ծագման արմատների մէջ են հանդիպում, նրանք անելի սակաւ են ճապոնական աշխարհագրական անունների մէջ (որ անելի շատ բնիկ արմատներով են կազմուած): Ուստի՝ օրինակների մէջ տալիս ենք նաեւ միքանի հասարակ անուն (որ ինչպէս նշել ենք մեր առաջին յօդուածում, կարող են ամէն պահի վերածուել յատուկ անունի):

Օրինակներ՝ **kyakuma** (հիւրասենեակ) **քիակումա**, **Kyushu** **Քիուշու**, **Ryukyu** **Ռիուկիու**, **Kitakyushu** **Քիտակիուշու**, **Kyoto** **Քիոտո**, **Bunkyo** **Բունկիո**, **gyakuryu** (հանդիպակաց հոսանք) **գիակուրիու**, **gyuniku** (տաւարի միս) **գիունիկու** (վառ օրինակ հասարակ գոյականի տառադարձելութեան – այսօր դարձել է խոհանոցային եզրոյթ), **Gyoda** **Գիոդա**, **Gyoja** **Գիոջա**, **sanmyaku** (լեռնաշղթայ) սամ(ն)միակու, **Myoko** **Միոկո**, **Nyu** **Նիու**, **Ha'nyū** **Yuzuru** **Հանիու** Յուծուրու, **ryakujī** (յապաւած գիր) **ռիակուջի**, **Goryu** **Գորիու**, **Chiryu** **Չիրիու**, **Ryoko** **Yonekura** **Ռիոկո** Յոնեկուրա, **ryokucha** (կանաչ թեյ) **ռիոկուչա**, **Hyakujō** **Հիակուջո**, **Hyuga** **Հիուգա**, **Hyogo** **Հիոգո**, **byōin** (հիւանդանոց) **բիոյին**: **Shaka** **Շակա**, **Koshu** **Քոշու**, **Shuzo** **Matsuoka** **Շուծո** Մաժուոկա, **Shunsuke** **Nakamura** **Շունսուկե** Նակամուրա, **Shosha** **Շոշա**, **Shobara** **Շոբարա**, **Chausu** **Չաիւսու**, **Shibichari** **Շի-**

բիճարի, Chubu Չուբու, Fuchu Հուճու, Chofu Չոհու, Choshi Չոշի, Jakuchi Ջակուճի, Soja Սոջա, Kuju Բուջու, Okada Ջունիճի Ոկադա Ջունիճի, Sanjo Սանջո, Hachijo-jima Հաճիջո-ջիմա:

Ժբ) կրկնակ բաղաձայններ

Թէեւ կրկնակ բաղաձայնները իմաստորոշ դեր ունեն ճապոներէնում, դրանք (ինչպէս եւ այլ օտար լեզուների պարագայում) աշխատում ենք հնարաւորինս պարզեցնել, այն է՝ գրել մէկ բաղաձայնով:

Օրինակներ. Hokkaido Հոկ(կ)այդո, Shakkā Շակկա, Nissan Նիսսան, Tottori Թոտորի, Settsu Սեժու, Sapporo Սապորո, Beppu Բեպու, Nisshin Նիշին:

Ժգ) բառաբաժանում

Ճապոնացիները, ինչպէս եւ չինացիները, աւանդաբար գրում են առանց բացատների՝ բոլոր բառերը իրար կից (հին ու միջին դարերում՝ Արեւմուտքում էլ բոլոր լեզուներն այդպէս էին վարում): Սակայն քանի որ լատինագիր գրադարձութիւնը բառանջատում ունի, մենք էլ օգտուելով այդ գրութիւնից, մեր տառադարձութեան մէջ բառերն իրարից անջատելու ենք այնպէս, ինչպէս դա անում է Հեփբուրնի գրութիւնը: Բնականաբար չենք կարող, օրինակ՝ անուն-ազգանունը միասին՝ իրար կպած գրել:

Օրինակներ. Shinzo Abe Շինձո Աբէ, Misaki Ito Միսակի Իտո, Satomi Ishihara Սատոմի Իշիհարա, Akio Toyoda Ակիո Թոյոդա, Satoru Iwata Սատորու Իատա, Hiroshi Mikitani Հիրոշի Միկիտանի:

Ժդ) բառի շեշտը

Ճապոներէնում բառի շեշտը շարժական է եւ կարող է զանազան վանկերի վրայ ընկնել: Ինչպէս եւ բոլոր այլ օտար լեզուների պարագայում, հայերէնը անտեսում է դա եւ անունները շեշտադրում ըստ մեր լեզուի կանոնների, այն է վերջին վանկի վրայ:

Օրինակներ (ճապոներէնի շեշտը թաւ տառով է). Toyota, հայերէն՝ Թոյոտա՝, Takahashi Թակահաշի՝, Tanaka Թանակա՝, Watanabe Վատանաբէ՝, Yamamoto Յամամոտո՝, Nakamura [նակա՛մըրա] Նակամուրա՝: Ուստի՝ Hiroshima Հիրոշիմա՝ (եւ ոչ թէ Հիրոսի՛մա), Nagasaki Նագասակի՝ (եւ ոչ թէ Նագասա՛կի), Fukushima Հուկուշիմա՝ (եւ ոչ թէ Ֆուկուսի՛մա):

Ժե) օտար (անգլերէն եւ այլ) բառերի տառադարձումը

Ճապոներէնն ունի օտար բառերի (չինարէն ծագման բառերը չհաշուած) մի զգալի շերտ: Դրանք զանգուածաբար աւելացան երկրորդ աշխարհամարտից յետոյ եւ մեծ մասամբ սերում են անգլերէնից: Ճապոներէնը սակայն դրանք յարմարեցրել է իր լեզուի հնչողութեանը եւ անունները շատ դէպքերում դարձել են անճանաչելի. Sumisu (անգլ. Smith ազգանունը), birudingu (անգլ. building «շէնք»), retaa (անգլ. letter «նամակ»), gaaru (անգլ. girl «աղջիկ»), bureddo (անգլ. bread «հաց»):

Հարցը նուրբ է. բառերը թողնել ճապոնական՝ն հնչողութեամբ եւ ուղղագրութեամբ, թէ՞ դրանք վերածնել հայերիս աւելի ծանօթ անգլերէնի

(կամ եւրոպական այլ լեզուների) բնօրինակով: Այսպիսի անունների մէջ մանաւանդ շատ են ներյաւելուած «ու/ը»երը (լատինագիր «Ս»):

Պարզութեան համար՝ մենք կ'առաջարկէինք օտար անունները թողնել ճապոներէնի հնչողութեամբ ու գրութեամբ (այլապէս տառադարձողը պէտք է ամէն անգամ անդրադառնար աղբիւր լեզուին ու ճշտէր դրա գրութիւնը), հարկ եղած դէպքում արտաքսելով միայն աւելորդ «ու»երը:

Օրինակներ. takushii (taxi) թակշի (տաքսի), supootsu (sport) սպոժ (սպորտ), naifu (knife) նայֆ (եւ ոչ թէ նայիու), fooku (fork) ֆոկ (ֆո՞րք), gorufu (golf) գորֆ / գոլֆ, supagettii (spaghetti) սպագետի (ջնջելով յաւելադիր «Ս»ն՝ բառը վերգտնում է մեզ ծանօթ իր կերպարը. նմանապէս եւ յաջորդները), Furansu (France) Ֆրանս, resutoran (restaurant) ռեստորան, gurusupu (group) գրուսպ:

ժգ) օտար բառերի համար գործածելի յաւելեալ վանկարան

Նոր օտար բառերը աւելի «հարազատօրէն» արտայայտելու համար ճապոներէն քատականա վանկարանը (որով գրում են նոր օտար բառերը) որդեգրել է վանկերի յաւելեալ մի խումբ (թուով քսան հինգ, որ բնաւ չի նշանակում թէ վաղը նորերը չեն ստեղծուելու): Դրանով փաստօրէն ճապոներէն լեզուն «յարմարեցրել» են օտարներին (նախ եւ առաջ անգլերէնին):

Հետեւեալ «վանկերը» ենթադրում են իբրեւ «նոր» բաղաձայններ՝ フ (fu) [ֆ], テ (te) [թ], ツ (tsu) [ց], チ (chi) [չ], シ (shi) [շ], ク (ku) [կ], ウ (u) [ւ], イ (i) [յ], ヲ (u dakuon – սա նորութիւն է որ չկայ աւանդական վանկարանում) [վ], デ (de) [դ], ジ (ji) [ջ], グ (gu) [գ]: Սրանց վրայ աւելացնելով «փոքրատառ» «ア» (a) [ա], «イ» (i) [ի], «ユ» (yu) [յու], «エ» (e) [ե], «オ» (o) [ո]՝ ստանում են նոր հնչիւնակապակցութիւններ: Օրինակ՝ «ファ» [ֆա], «フィ» [ֆի], «フェ» [ֆե], «フォ» [ֆո], «ブ»ն առանձին համարում է [վու/վը] են.: Այս համակցութիւնները գոյութիւն չունեն բուն ճապոներէն բառերում, ոչ էլ աւանդական չինարէն փոխառութիւններում:

Ճապոնացիները (ի տարբերութիւն չինացիների որոնք ամէն ինչ թարգմանում են) համարում են, որ օտար երեւոյթները աւելի լաւ է հենց օտար բառերով արտայայտել, եւ բնաւ չեն պայքարում անգլերէն բառերի հոսքի դէմ: Լինում են դէպքեր, երբ ճապոներէնը, արդէն ունենալով իր բառը (նոյնիսկ երկու բառ՝ մէկը բնիկ ճապոներէն, միւսը ժամանակին չինարէնից փոխ առած), նորից փոխ է առնում անգլերէն մի բառ եւ դրան իմաստային մի նոր երանգ տալիս: Օրինակ՝ «դուռ» բառը. 扉 (とびら) tobira, որ ճապոներէն բնիկ բառ է, ցոյց է տալիս ճապոնական աւանդական «ծ(դ)խնետուր դուռ» առարկան: Ճապոներէնը ժամանակին փոխ է առել չինարէն 門 (モン) mon բառը, որ նշանակում է «մեծ, ճոխ դուռ, դարպաս»: Զբաւարարուելով այդքանով, վերջին ժամանակներս անգլերէնից փոխ է առել նաեւ ドア doa բառը (անգլ. door), որին տուել է նոր իմաստ՝

«ժամանակակից դուռ՝ ինքն իրեն բացուող, սահող կամ՝ ապակեայ», մի խօսքով՝ եւրոպական ոճի:

ԱՄՓՈՓՈՒՄ

Իբրեւ եզրակացութիւն, մեր մօտեցումը հետեւեալն է: Հաշուի առնելով Հեփբորնի գրադարձութեան լայն գործածութիւնը միջազգային ասպարէզում, կ'առաջարկէինք հիմնուել հենց այդ գրութեան վրայ, այն համեմատելով ու ճշտելով ճապոներէնի քանա վանկարանով, պաշտօնական լատինագրով ու ռուսական գրադարձութիւնով: Քանա գրութեան հետ համեմատելու գաղափարը ուղղուած է բնականաբար միայն ճապոնագէտներին. լայն հասարակութիւնը ի վիճակի չէ այն իւրացնելու:

Այսպիսով՝ ա) առնում ենք ճապոներէն անունների լատինագիր գրադարձութիւնը, բ) անունը տառադարձում ենք հայերէն՝ գրեթէ տառ առ տառ, ըստ վերը նշած սկզբունքների (տե՛ս նաեւ՝ Յաւելուած Բ.), գ) տառադարձուած անունը իվերջոյ «յղկում» ենք եւ դնում հայերէնի կաղապարի մէջ, օրինակ՝ բառասկզբին գրում ենք «յա, վա», իսկ բառամիջին՝ «իա, (ո)ա», բառավերջին «ե»ի փոխարէն գրում ենք «է» եւ այլն՝ համաձայն հայերէնի ուղղագրութեան:

Մեր նախորդ յօդուածների տեսական ամփոփիչ մտքերի մեծ մասը հաւասարապէս վերաբերում է եւ ճապոներէնին, եւ այստեղ դրանք չենք կրկնում:

Անհրաժեշտ ենք համարում, որ հայ լեզուաբաններ եւ այլ մասնագէտներ վերանայեն ճապոներէնի տառադարձութիւնը եւ ճշտեն ու տարածեն ճապոնական անունների հայերէն միասնական գրելաձեւերը: Օգտակար կը լինէր կազմել համապարփակ մի աղիւսակ (բոլոր հնարաւոր վանկերի համակցութեամբ) եւ այն տրամադրել լրատուական միջոցներին, արտաքին գործոց նախարարութեանը եւ հարցին առնչութիւն ունեցող այլեւայլ կազմակերպութիւնների (աշխարհագրական հիմնարկներ, քարտէզագրական հրատարակչութիւններ, զանազան ուսումնավայրեր...):

Ինչպէս միշտ, ակնկալում ենք Հայաստանի պետական ու գիտական հաստատութիւնների գործուն ներգրաւումը միասնական տառադարձութիւն մշակելու ասպարէզում:

ՅԱԿԵԼՈՒԱԾ Ա. – ԱՂԻԻՍԱԿ ՎԱՆԿԵՐԻ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ
(ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ԸՍՏ ՃԱՊՈՆԱԿԱՆ ՔԱՆԱ ՎԱՆԿԱՐԱՆԻ)

Հիրագանա	Քատականա	Հեփբորն	Նիհոն-շիկի	Քունրե-շիկի	IPA (ՀՄԸ)	Ռուսերէն	Հայերէն
あ	ア	a	a	a	[a]	a	ա
い	イ	i	i	i	[i]	и/й	ի/յ
う	ウ	u	u	u	[u]	y	ու
え	エ	e	e	e	[e]	э	ե
お	オ	o	o	o	[o]	o	ո

Հիրա- գաննա	Քատա- կաննա	Հեփբու- րն	Նիհոն- շիկի	Քունթե- շիկի	IPA (ՀՄԸ)	Ռուսերէն	Հայերէն
か	カ	ka	ka	ka	[ka]	ка	քա/կա
き	キ	ki	ki	ki	[kʲi]	ки	քի/կի
く	ク	ku	ku	ku	[ku]	ку	քու/կու
け	ケ	ke	ke	ke	[ke]	кэ	քե/կե
こ	コ	ko	ko	ko	[ko]	ко	քո/կո
さ	サ	sa	sa	sa	[sa]	са	սա
し	シ	shi	si	si	[ɕi]	си	շի
す	ス	su	su	su	[su]	су	սու
せ	セ	se	se	se	[se]	сэ	սե
そ	ソ	so	so	so	[so]	со	սո
た	タ	ta	ta	ta	[ta]	та	թա/տա
ち	チ	chi	ti	ti	[tɕi]	ти	չի/ճի
つ	ツ	tsu	tu	tu	[tsu]	цу	ցու/ծու
て	テ	te	te	te	[te]	тэ	թե/տե
と	ト	to	to	to	[to]	то	թո/տո
な	ナ	na	na	na	[na]	на	նա
に	ニ	ni	ni	ni	[ɲi]	ни	նի
ぬ	ヌ	nu	nu	nu	[nu]	ну	նու
ね	ネ	ne	ne	ne	[ne]	нэ	նե
の	ノ	no	no	no	[no]	но	նո
は	ハ	ha	ha	ha	[ha]	ха	հա
ひ	ヒ	hi	hi	hi	[çi]	хи	հի
ふ	フ	fu	hu	hu	[ɸu]	фу	հու
へ	ヘ	he	he	he	[he]	хэ	հե
ほ	ホ	ho	ho	ho	[ho]	хо	հո
ま	マ	ma	ma	ma	[ma]	ма	մա
み	ミ	mi	mi	mi	[mʲi]	ми	մի
む	ム	mu	mu	mu	[mu]	му	մու
め	メ	me	me	me	[me]	мэ	մե
も	モ	mo	mo	mo	[mo]	мо	մո
や	ヤ	ya	ya	ya	[ja]	я	յա/իա
ゆ	ユ	yu	yu	yu	[ju]	ю	յու/իու
よ	ヨ	yo	yo	yo	[jo]	ё	յո/իո
ら	ラ	ra	ra	ra	[ra]	ра	րա
り	リ	ri	ri	ri	[ɾi]	ри	րի
る	ル	ru	ru	ru	[ɾu]	ру	րու
れ	レ	re	re	re	[re]	рэ	րե
ろ	ロ	ro	ro	ro	[ro]	ро	րո
わ	ワ	wa	wa	wa	[wa~ɰa]	ва	վա/(ն)ա
ゐ	ヰ	(w)i	wi	i	[i]	ви	ի
ゑ	ヱ	(w)e	we	e	[e]	вэ	ե
を	ヲ	(w)o	wo	o	[o]	во	ո

Հիրագանա	Քատա-կանա	Հեփբուրն	Նիհոն-շիկի	Քունրե-շիկի	IPA (ՀՄԸ)	Ռուսերէն	Հայերէն
ん	ン	n-n'(-m)	n-n'	n-n'	[m~n~ŋ~N]	-н	ն/մ
が	ガ	ga	ga	ga	[ga]	га	գա
ぎ	ギ	gi	gi	gi	[gi]	ги	գի
ぐ	グ	gu	gu	gu	[gu]	гу	գու
げ	ゲ	ge	ge	ge	[ge]	гэ	գե
ご	ゴ	go	go	go	[go]	го	գո
ざ	ザ	za	za	za	[za~dza]	дза	ծա
じ	ジ	ji	zi	zi	[zi~dzi]	дзи	ջի
ず	ズ	zu	zu	zu	[zu~dzu]	дзу	ծու
ぜ	ゼ	ze	ze	ze	[ze~dze]	дзэ	ծե
ぞ	ゾ	zo	zo	zo	[zo~dzo]	дзо	ծո
だ	ダ	da	da	da	[da]	да	դա
ぢ	ヂ	ji	di	zi	[zi~dzi]	дзи	ջի
づ	ヅ	zu	du	zu	[zu~dzu]	дзу	ծու
で	デ	de	de	de	[de]	дэ	դե
ど	ド	do	do	do	[do]	до	դո
ば	バ	ba	ba	ba	[ba]	ба	բա
び	ビ	bi	bi	bi	[bi]	би	բի
ぶ	ブ	bu	bu	bu	[bu]	бу	բու
べ	ベ	be	be	be	[be]	бэ	բե
ぼ	ボ	bo	bo	bo	[bo]	бо	բո
ぱ	パ	pa	pa	pa	[pa]	па	փա/պա
ぴ	ピ	pi	pi	pi	[pi]	пи	փի/պի
ぷ	プ	pu	pu	pu	[pu]	пу	փու/պու
ぺ	ペ	pe	pe	pe	[pe]	пэ	փե/պե
ぽ	ポ	po	po	po	[po]	по	փո/պո
きゃ	キャ	kya	kya	kya	[k'a]	кя	քիա/կիա
きゅ	キュ	kyu	kyu	kyu	[k'iu]	кю	քիու/կիու
きょ	キョ	kyo	kyo	kyo	[k'o]	кё	քիո/կիո
ぎゃ	ギャ	gya	gya	gya	[g'a]	гя	գիա
ぎゅ	ギュ	gyu	gyu	gyu	[g'iu]	гю	գիու
ぎょ	ギョ	gyo	gyo	gyo	[g'o]	гё	գիո
しゃ	シャ	sha	sya	sya	[ɕa]	ся	շա
しゅ	シュ	shu	syu	syu	[ɕiu]	сю	շու
しょ	ショ	sho	syo	syo	[ɕo]	сё	շո
じゃ	ジャ	ja	zya	zya	[za~dza]	дзя	ջա
じゅ	ジュ	ju	zyu	zyu	[zu~dzu]	дзю	ջու
じょ	ジョ	jo	zyo	zyo	[zo~dzo]	дзё	ջո
ちゃ	チャ	cha	tya	tya	[tea]	тя	չա/ճա
ちゅ	チュ	chu	tyu	tyu	[teu]	тю	չու/ճու

Հիրա- գանա	Քատա- կանա	Հեփբու- րն	Նիհոն- շիկի	Քունրե- շիկի	IPA (ՀՄԸ)	Ռուսերէն	Հայերէն
ちよ	チヨ	cho	tyo	tyo	[tɕo]	тѣ	չո/ճո
ぢゃ	ヂャ	ja	dya	zya	[za~dza]	дзя	ջա
ぢゅ	ヂュ	ju	dyu	zyu	[zu~dzu]	дзю-	ջու
ぢょ	ヂョ	jo	dyo	zyo	[zo~dzo]	дзѣ	ջո
にゃ	ニャ	nya	nya	nya	[ɲa]	ня	նիա
にゅ	ニュ	nyu	nyu	nyu	[ɲu]	ню	նիու
にょ	ニョ	nyo	nyo	nyo	[ɲo]	нѣ	նիո
ひゃ	ヒャ	hya	hya	hya	[ɕa]	хя	հիա
ひゅ	ヒュ	hyu	hyu	hyu	[ɕu]	хю	հիու
ひょ	ヒョ	hyo	hyo	hyo	[ɕo]	хѣ	հիո
びゃ	ビャ	bya	bya	bya	[bʲa]	бя	բիա
びゅ	ビュ	byu	byu	byu	[bʲu]	бю	բիու
びょ	ビョ	byo	byo	byo	[bʲo]	бѣ	բիո
ぴゃ	ピャ	pya	pya	pya	[pʲa]	пя	փիա/պիա
ぴゅ	ピュ	pyu	pyu	pyu	[pʲu]	пю	փիու/պիու
ぴょ	ピョ	pyo	pyo	pyo	[pʲo]	пѣ	փիո/պիո
みゃ	ミャ	mya	mya	mya	[mʲa]	мя	միա
みゅ	ミュ	myu	myu	myu	[mʲu]	мю	միու
みょ	ミョ	myo	myo	myo	[mʲo]	мѣ	միո
りゃ	リャ	rya	rya	ry	[ɾa]	ря	րիա
りゅ	リュ	ryu	ryu	ryu	[ɾu]	рю	րիու
りょ	リョ	ryo	ryo	ryo	[ɾo]	рѣ	րիո

ՅԱԻԵԼՈՒԱԾ Բ. – ԱՂԻԻՍԱԿ ՀԵՓԲՈՒՐՆԻ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՄԲ
 ԼԱՏԻՆԱԳԻՐ ՃԱՊՈՆԵՐԷՆ ԵՒ ՀԱՅԵՐԷՆ ՏԱՌԵՐԻ
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹԵԱՆ («Չ-, Ժ-, Փ-, Թ-, Յ-» ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ՝
 ԲԱՌԱՍԿՁԲԻ ՀԱՄԱՐ)

Հեփբուրն	Հայերէն
a	ա
b	բ
ch	չ- / ճ
d	դ
e	ե
f	հ
g	գ
h	հ
i	ի / յ
j	ջ
k	ք- / կ
m	մ
n	ն
o	ո

Հեփբուրն	Հայերէն
p	փ- / պ
r	ր
s	ս
sh	շ
t	թ- / տ
ts	ց- / ծ
u	ու
w	վ / (ն)լ
y	յ / ի
z	ծ
aa, ā, â	ա
ee, ei, ē, ê	ե
ii	ի
oo, ou, ō, ô	ո
uu, ū, û	ու

THE PRINCIPLES OF TRANSLITERATING (TRANSCRIBING) FOREIGN PROPER
NAMES INTO ARMENIAN, PART IX – JAPANESE LANGUAGE
(SUMMARY)

ARMEN MICHAELIAN
armen_michaelian@yahoo.com

This article is one of the series that deals with the transliteration (transcription) of foreign proper names into Armenian (the way to transcribe foreign names in Armenian characters). The references of the previous articles are:

1) The Principles of Transliterating Foreign Proper Names into Armenian, Part I – Middle Eastern Languages [in Armenian], *Haigazian Armenological Review*, vol. 40, Haigazian University Press, Beirut 2020, pp. 341-64.

2) The Principles of Transliterating Foreign Proper Names into Armenian, Part II – Classical Languages (Ancient Greek and Latin) [in Armenian], *Bazmavep*, Year CLXXVIII, Venice 2020, No. 1-2, pp. 304-36.

3) The Principles of Transliterating Foreign Proper Names into Armenian, Part III – French Language [in Armenian], *Haigazian Armenological Review*, vol. 41, Haigazian University Press, Beirut 2021, pp. 443-466.

4) The Principles of Transliterating (Transcribing) Foreign Proper Names into Armenian, Part IV – English Language [in Armenian], *Handes Amsorya*, Year CXXXV, Vienna 2021, pp. 197-246.

5) The Principles of Transliterating (Transcribing) Foreign Proper Names into Armenian, Part V – German Language [in Armenian], *Bazmavep*, Year CLXXX, Venice 2022, No. 1-2, pp. 277-303.

6) The Principles of Transliterating (Transcribing) Foreign Proper Names into Armenian, Part VI – Italian and Spanish Languages [in Armenian], *Bazmavep*, Year CLXXX, Venice 2022, No. 3-4, pp. 271-300.

7) The Principles of Transliterating (Transcribing) Foreign Proper Names into Armenian, Part VII – Russian (Compared to Other Slav[on]ic Languages) [in Armenian], *Haigazian Armenological Review*, vol. 42/2, Haigazian University Press, Beirut 2022, pp. 169-198.

8) The Principles of Transliterating (Transcribing) Foreign Proper Names into Armenian, Part VIII – Chinese Language [in Armenian], *Bazmavep*, Year CLXXXI, Venice, 1-2:2023, pp. 272-305.

The present part of the series is devoted to the transliteration (transcription) of names of Japanese origin. The principle of transliteration is based (as in the whole series) on classical Armenian spelling, definitely ruling out “Soviet” transliteration on one side and “Cilician” transliteration on the other. After a reminder of the phonological and orthographic principles of Armenian transliteration mentioned in the first articles of the series, the author scrutinizes the most problematic sounds and phonemes of Japanese and confirms or proposes (based on numerous examples) a coherent and principled transliteration for each of them.

The series of articles will continue with two other important languages for the Armenian world – Hindi and Georgian.